ԻՐԱՎԻՃԱԿԸ ՎԱՆՈՒՄ 1896 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1890-ական թվականների ընթացքում ծանր օրեր էր ապրում Վանի վիլայեթի հայ բնակչությունը. պանդուխտ հայերի թիվն անընդմեջ ավելանում էր, տնտեսական ու քաղաքական վիճակը ծանրանում էր, առևտուրն անկում էր ապրում, հարկերն ու տուրքերը բազմապատկվում էին, իսկ բանտերը լցվում՝ անմեղ հայերով:

Վասպուրականը, լինելով թուրք կառավարության ուշադրության կենտրոնում, ենթարկվում էր խիստ հսկողության: Իրավիճակն ավելի վատացավ 1891 թ., երբ Վանի կուսակալ դարձավ իր բռնություններով հայտնի Ֆերիք Պահրի փաշան:

Պատմում են, որ կուսակալը, Վանի դաշտում տեսնելով սաղարթների միջից վեր սլացող գմբեթները, հարցնում է, թե ի՞նչ են դրանք: Իսկ երբ իմանում է, որ հայկական վանքեր են, աղաղակում է. «Ատոնք շատոնց հիմնայատակ պէտք էր եղած ըլլային. որովհետև, քանի անոնք կը մնան, հայութիւնն ալ պիտի մնայ հարկաւ...»:[1]

Պահրի փաշան, իր պաշտոնավարության ընթացքում, բազմիցս հալածանքների էր ենթարկել հայ բնակչությանը: Ժամանակակիցների թողած վկայության համաձայն, փաշան նույնիսկ սովորություն ուներ քայլելիս իրենից առաջ քայլող չտեսնել, իսկ եթե մեկը, չիմանալով այդ մասին, փորձեր քայլել կամ էլ կառքով առաջ անցներ նրանից, անմիջապես կենթարկվեր մտրակի հարվածների:[2]

Կուսակալի նման վերաբերմունքը չէին կարող հանդուրժել ոչ արմենականները, ոչ դաշնակցականները և ոչ էլ հնչակյանները, բայց քանի որ վերջին երկուսը թույլ էին Վանում, ոչինչ չէին կարող ձեռնարկել: Իսկ Տրապիզոնում, ինչպես նշում է արմենականներից՝ Արտակ Դարբինյանը, այդ կազմակերպությունները «լայն դաշտ ստեղծած էին» իրենց համար:[3] Ռուսի 1895 թ. դաշնակցականները կազմակերպեցին Պահրի փաշայի մահափորձը Տրապիզոնում, երբ նա Վանից վերադառնում էր Կ. Պոլիս: Մահափորձն ավարտվեց անհաջողությամբ և արդյունքում, վրեժխնդիր լինելով, փաշան հարյուրավոր տրապիզոնցի հայեր կոտորեց:[4] Իսկ Հ.Պողոսյանի կարծիքով՝ մահափորձը կազմակերպեցին հնչակյանները, որոնց հաջողվեց միայն վիրավորել Պահրին:[5]

---

[1] Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947, էջ 49:
[2] Հ.Ս. Պողոսյան, Վասպուրականի պատմությունից 1850-1900, Ե.,1988, էջ 256:
[3] Ա.Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 56:
[4] Նույն տեղում:
[5] Հ.Մ.Պողոսյան, նշվ. աշխ., էջ 256:

Սասնա դեպքերի հետ կապված Բ.Դուռը՝ եվրոպացիների հուզված հանրային կարծիքը խաբելու համար, թե իբր անհանգստանում է արևմտահայության իրավիճակով, պաշտոնական արեց Պահրի փաշային և փոխարենը Վանի կուսակալ նշանակեց բնավորությամբ հայասեր ու խաղաղասեր Նազմ փաշային:

Դեռևս 1895 թ. Նազմ փաշան հեռագրեր էր ստանում Կ. Պոլսից՝ հետևյալ բովանդակությամբ. «կոտորել հայերին, չխնայել տղամարդկանց, այրել նոցա տները, ավարի ու կողոպուտի ենթարկել նոցա կայքը, միայն կարելին եղածին չափ խնայել կանանց կյանքին»: Սակայն Նազմը խուսափում էր իրականացնել այդ հրամանը՝ պատճառաբանելով, որ հայերը Վանում ունեին անառիկ դիրք և նրանք փակված իրենց տներում՝ նախապատրաստվում են ինքնապաշտպանության: Դեռ ավելին, Նազմ փաշան, հասկանալով սուլթանի թիկնապահ Սաադեդինի մտադրությունը, խորհուրդ տվեց հայերին, վերջինիս կաշառել Աղթամարի եկեղեցու մահացած խաչատուր կաթողիկոսի թողած 1500 ոսկով, որպեսզի արագացվեր Սաադեդինի մեկնումը Վանից:[7] Բայց հայերը հապաղեցին և չիրականացրեցին Նազմ փաշայի առաջարկը: Մեր կարծիքով, եթե նույնիսկ հայերը չհապաղեին և կաշառեին Սաադեդինին, միևնույն է, չէին կարող կասեցնել Վանի կոտորածը: Այն միայն հնարավոր կլիներ որոշակի ժամանակով հետաձգել, որը հնարավորություն կտար հեղափոխականներին՝ էլ ավելի արդյունավետ կազմակերպել դիմադրությունը:

Վանը գտնվում էր ծանր, օրհասական վիճակում: Բոլորը պատրաստվում էին ինքնապաշտպանության՝ «...որը հրացան էր ձեռք բերում, որը ատրճանակ, որը փամփուշտ»:[8]

Հեղափոխական գործիչները, իրենց հայրենիքում ազատագրական պայքար կազմակերպելու և առաջնորդելու համար, կազմակերպական կառույցներ էին հիմնում Օսմանյան կայսրության սահմանամերձ շրջաններում, հատկապես Պարսկաստանի Ատրպատական նահանգի Սալմաստ գավառում: Վերջինս համարվում էր Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածները միացնող կամուրջ: Սալմաստից դեպի Վան տանող բոլոր ճանապարհներն անցնում էին Դերեկա վանքով: Հետզհետե այստեղ էին հավաքվել հայ ազատագրական պայքարի նվիրյալ զավակները, հանձինս արմենականների՝ Կարաբեկի (Արմենակ Եկարյան), Դերբեի (Մանուկ Վարդանյան) և այլոց, ինչպես նաև դաշնակցականներ՝ Վարդանի, Սև Քարեցի Սաքոյի, Փոխիկի, Ջալլադի, Պետոյի, Չաթոյի և Շերոյի:

Այդ ժամանակահատվածում էր, որ հանդես եկան զինատար խմբեր, որոնք Սալմաստից Դերեկի մուտակայքով զենք ու զինամթերք սկսեցին տեղափոխել Վասպուրական: Ինչպես վկայում է Հ. Գևորգյանը, արմենականներն առաջինն էին զենք տեղափոխել Սալմաստից Վան:[9]

---

[6] Նույն տեղում, էջ 262:
[7] Հ.Պողոսյան, Ինքնապաշտպանական կռիվները Սասունում, Զեյթունում և Վասպուրականում. Սովետական Մանկավարժ, Ե., 1986, թիվ 5, էջ 64:
[8] Խանասորա Վարդանի Հիշատակարանը, Ե., 1992, էջ 92:
[9] Հ.Գևորգյան, Ազատագրական պայքարի հերոսապատումից, Ե., 2006, էջ 27:

Ինքնապաշտպանություն կազմակերպելու նպատակով՝ թշնամու հանկարծակի հարձակման դեպքում, արմենականները, դաշնակցականներն ու հնչակյանները հրավիրեցին մի քանի ժողովներ Վանի Այգեստան թաղամասում, որոշեցին կազմակերպել հանգանակություն՝ Պարսկաստանից զենք գնելու նպատակով: Միաժամանակ, նրանք մի շարք նամակներ հղեցին Պարսկաստան՝ զինված խմբեր և զենքեր ուղարկելու համար: Իր հերթին Պարսկաստանից պայմանական հեռագիր ստացվեց. «Այսքան մարդ ուղարկեցք, որ գան զենք տանին»:[10]

Սակայն հեռագիրն ընկել էր արմենականներից՝ Ոսկան-Աքլորի (Ոսկան Նազարյան) ձեռքը, նա էլ փոխանակ այն հանձներ դաշնակցականների ղեկավար Պետոյին (Ալեքսանդր Պետրոսյան), շտապել էր գաղտնի զինատար խումբ ուղարկել Պարսկաստան: Ուստի դաշնակցականներն որոշեցին Վազգենին (Տիգրան Դերոյան), իր մի քանի ընկերներով, նույնպես ուղարկել Պարսկաստան: Այստեղ նրանց միացան արմենականները:

Մոսին հրացաններով զինված 60 հոգուց բաղկացած խումբը՝ Պարսկաստանից շարժվեց Վան: Սակայն, Սարայի մոտակայքում, խումբը թեժ կռվի բռնվեց թուրքական կանոնավոր ջոկատի և քրդերի հետ: Մարտը շարունակվեց մինչև ուշ երեկո և ավարտվեց՝ մութն ընկելուն պես: Հակառակորդը կորցրեց 80 մարդ, իսկ հայերը՝ 3 մարդ: Առարջարկվեց վերադառնալ Պարսկաստան, սակայն հայդուկ Խեչոն քննադատական խոսքերով դիմեց նրանց. «Ամոթ չէ՞ մեզ՝ հայդուկներիս, հետ դառնալ. էլ ինչու՞ համար ենք զենք կրում, զարդի՞, թե՝ պարծենալու: Ամոթ է. երկրի ժողովուրդը աչքը Պարսկաստանին հառած՝ մեզանից օգնություն է սպասում... Լավ է ճանապարհին հայդուկին վայել մահով մեռնինք, քան թե երկչոտությամբ նահանջենք»:[11]

Բնականաբար, այս խոսքերը ոգեշնչեցին տղաներին, որոնք էլ բաժան-բաժան շարունակեցին ճանապարհը՝ հասնելով Բողազ Քեսան գյուղը, որտեղ 11 քաջերով՝ Դավիթը, Զեյթունցի Հաճին, Ներսեսը, Ուզուն Խեչոն, Ս. Օտյանը, Նիկոլը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), և ուրիշներ պաշարվեցին գոմում թշնամու կողմից: Թշնամին երդիկից կրակների տարափ էր թափում նրանց գլխին: Սակայն, տեսնելով, որ անօգուտ է, դեզի մի խուրց դրեցին դռան առջև և այրեցին այն: Երբ ծուխը թափանցեց ներս, հայ մարտիկներն որոշեցին արագ հարվածով կոտրել դուռը և թշնամուն խուճապի մատնելով իրենց կրակոցներով՝ դուրս պրծնել հրդեհի միջից: Քաջերին հաջողվեց սպանել նրանց 2 ցեղապետերին՝ Շնդիին և Շավեշին, ինչպես նաև 5 ուրիշ քրդերի:

Քուրդ ցեղապետերի սպանությունը սարսափի և վրեժխնդրության ալիք բարձրացրեց քրդերի մոտ, որոնք էլ մի քանի օր շարունակ հարձակվեցին շրջակա Պոխազքեսեն, Մանտան, Հասփստան և հայկական մի քանի այլ գյուղերի վրա: Նրանք վիրավորեցին ու սպանեցին 40-ից ավելի գյուղացիների, որի հետևանքով բազմաթիվ գյուղացիներ, թողնելով իրենց տները, փորձեցին ապաստան գտնել Վանում:

---

[10] Խանասորա Վարդանի Հիշատակարանը, էջ 92:

[11] Նույն տեղում, էջ 94:

Խմբապետ Տեր-Հովհաննիսյանը կռվում ստացավ Դուման անունը: Տիրանալով սպանվածների ձիերին՝ տղաները շարժվեցին Հաֆթադաղի բարձունքը, որտեղ ենթարկվեցին նորից քրդերի հարձակման, բայց կարողացան ետ շարտել նրանց: Այս կռվում հայերից զոհվեցին 4-5 հոգի, իսկ վիրավորվեցին՝ մի քանիսը:

Խմբից բաժանված տղաներից մի քանիսը, մնալով բաց դաշտում, ցրտահարվեցին ու մահացան, նրանց մեջ էր նաև զինեգործ ուստա Փանոսը, որի մահն արմենականների համար ծանր կորուստ եղավ: Ձենքի առաջին արհեստանոցը, որը հիմնել էին արմենականները Վանում, գործում էր շնորհիվ հմուտ զինեգործ Փանոսի: Վերջինս պատրաստում էր Այնալու հրացաններ, միաժամանակ վերանորոգում՝ հները: Բայց արհեստանոցի գործունեությունը քաղաքում, գնալով վտանգավոր էր դառնում, դրա համար այն տեղափոխվեց քաղաքից դուրս: Գլխավոր զինեգործ Փանոսը՝«... շատ մօտիկ ծանօթ լինելով քիւրտ աշիրաթապետ Մուկուրցի Թամուր աղայի, որը կը բնակէր Սարայի շրջան՝ Թէօրան գիւղ. կը գնայ անոր քով եւ կառաջարկէ զինագործարանը փոխադրել անոր տուն: Թամուր աղան ուրախությամբ կընդունէ այտ առաջարկը»:[12] Սակայն, այստեղ նույնպես ապահով չէր, քանի որ ուստա Փանոսը 1894 թվականից հաճախ էր ենթարկվում Պահրի Փաշայի հալածանքներին և բացի այդ, ցանկացած պահին թուրք իշխանության համակիր քրդերը՝ կարող էին մատնել զինագործարանի գտնվելու վայրը: Ուստի, արմենականների որոշմամբ, Փանոսն արհեստանոցը տեղափոխեց Պարսկաստան՝ Սալմաստի Հավթվան գյուղ: Այնտեղից մեծ քանակությամբ զենք զինատար խմբերի օգնությամբ՝ Երկիր տեղափոխելու նպատակով: Ներսեսի զինատար խմբին էր միացել ինքը՝ ուստա Փանոսը:

Ուշագրավ է, հատկապես հայդուկ Չաթոյի մահը: Վերջինիս 1894-ին սպանվեց զինավարժության ժամանակ, պատահական գնդակից Դերեկի վանքում ու թաղվեց այնտեղ: Նրա մահը ծանր ազդեցություն ունեցավ իր անբաժանելի ընկերոջ՝ Շերոյի վրա, որն այցելելով Չաթոյի գերեզման, նստեց շիրմաքարին ու աղիողորմ լաց լինելով՝ասաց. «Աստուած իմ, հոգիս այստեղ առ, ես էլ մեռնիմ եւ թաղուիմ իմ սիրելի ընկեր Չաթոյի մոտ»:[13] Ինչպես Շերոն խնդրել էր Աստծուն, այդպես էլ եղավ երկու տարի անց: Նա Նիկոլ Դումանի 72 հոգուց բաղկացած խմբի վալատն էր, որը 1896 թ. մարտի 20-ին խմբի հետ Սալմաստից անցնում էր Վան: Վերադառնալով Դերեկ՝ խումբը թեժ կռվի բռնվեց քրդերի հետ: Անտեսելով կարկտի նման տեղացող թշնամու գնդակները և խափանելով հակառակորդի գրոհը՝ Շերոն ծանր վիրավորվեց: Վերջինս դժվարությամբ հասավ ընկերոջ գերեզմանին, փարվեց հողաթմբին, ու կնքեց իր մահկանացուն:[14]

Վանում դրությունը գնալով վատանում էր, քանի որ կռվող տղաներից շատերը՝ Դերբեն, Ա.Եկարյանը, Ֆարհատը (Սարգիս Օհանջանյան), Ներսես Մանուկյանը և Գարեգինը, բացակայում էին: Նրանք ձերբակալվել էին

---

[12] Հ.Գևորգյան, նշվ. աշխ., էջ 36:
[13] Նույն տեղում, էջ 76:
[14] Հուշապատում Հ.Յ.Դ. 1890-1950 թ.թ., Բոստոն, 1950, էջ 349:

Սալմաստում՝ զենք բերելու ժամանակ: Նույն ճակատագրին արժանացավ նաև Նիկոլն՝ իր 40-50 ընկերներով:

Խուճապի մատնված Վանի բնակչությունը հաճախակի էր տեղեկանում սահմանային մասերում կատարվող թալանի ու սպանությունների մասին, որոնք իրականացնում էին քրդական թափառաշրջիկ հրոսակային Ռևետ կոչված խմբերը, որոնց ապրուստի միակ միջոցը թալանն էր: Թալանից խուսափելու համար՝ վարժարաններն ու շուկան մեծ մասամբ փակված էին լինում:

Սակայն Դաշնակցականները, Հնչակյանները և Արմենականները Վանում փորձում էին կազմակերպել հայ ժողովրդի դիմադրությունը: Յուրաքանչյուր կուսակցություն կարծում էր, որ ավելի շուտ ծեռք կբերի ազատություն, քան որևէ մեկ այլ կուսակցություն: Ինչպես վկայում էր ականատես Անուշավան Տեր-Մկրտչյանը, դաշնակցականները նույնիսկ օրը ցերեկով ծեծկռտուք էին սարքում՝ հաշվի չառնելով հետևանքները: Այնուհետև շարունակում է. «անընդմեջ ցույցեր էին կազմակերպում չորս հրացաններով և մի քանի շեշխաններով ու կիսազեն խմբերով տնից տուն, այգուց այգի էին շրջում, իրենք իրենց ազատության ռահվիրաներ անվանելով, և հեքիաթային ու առասպելական լուրեր տարածելով Եվրոպայի և Ռուսաստանի անունով: Խեղճ հայ ժողովուրդ, ազատության ծարավը շուրջերին, ոգեշնչվում էր այդ խոսքերով և հավատում այդ հերյուրանքներին»:[16]

Վան քաղաքը բաժանված էր երկու մասի. մեկը՝ Քաղաքամեջի, որը տարածվում էր բերդի հարավային մասով և շրջապատված էր պարիսպներով, մյուսը՝ Այգեստանի, որը ընկած էր Քաղաքամեջի արևելյան մասում և շրջապատված էր Վարագա, Կուռուպաշ և Ծրտոտ-Քարի լեռներով: Այգեստանի տները ցրված էին այգիների մեջ, որոնք իրարից բաժանվում էին առանձին պատերով: Այս ամենը դիմադրություն կազմակերպելու համար հարմար պայմաններ էին ստեղծում: Բնականաբար Վանում գտնվող կուսակցությունների ղեկավարները քնած չէին և կանխազգալով կառավարության հետագա գործողությունները՝ հանձինս Մկրտիչ Ավետիսյանի (արմենական), Պետոյի (դաշնակցական) և Մարտիկի (հնչակյան), փորձում էին կազմակերպել ինքնապաշտպանությունը:

Սխալ է շրջանառվող այն կարծիքը, թե իբր վանեցիները շատ խոհեմ գտնվեցին և առիթ չտվեցին թուրքերին Վանում կոտորած սկսելուն: Բայց փաստերը վկայում են, որ կային առիթներ, ինչպես տեսանք, և բացի այդ օսմանցու համար առիթ ստեղծելը դժվար չէր:

Իհարկե, այս ամենը դուր չէր գալիս Աբդուլ Համիդ 2-րդին, որն էլ անհամբեր սպասում էր հարմար պահի՝ Վանում նույնպես կոտորած սկսելու համար: Նազմ փաշայի գործողությունները ծեռնտու չէին սուլթանին, ուստի 1895 թ. հոկտեմբերին սուլթանի թիկնապահ ֆերիք Սաադեդին փաշան ժամանեց Վան՝ իբրև թե «բարենորոգումներ» անցկացնելու: Վերջինս ծագումով հայ էր, Կարապետ անունով հայի զավակ, ծնված Ախլաթի Ծղակ գյուղում: 12 տարեկան հասակում ծնողների հետ մեկնում է Կ. Պոլիս, կրթություն ստա-

---

[16] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆ. 427, ց.1, գ.30, թ.9-10:

նում այնտեղ և աստիճանաբար բարձրանալով՝ դառնում սուլթանի թիկնապահը, որն էլ քայլ առ քայլ փորձեց իրականացնել Աբդուլ 2-րդի հայաջինջ ծրագիրը:[16]

1895 թ. հոկտեմբերի կեսերին առատ ձյուն եկավ և ծածկեց չհնձված արտերը, խաղողի այգիները, մրգառատ ծառերը, որոնց ճյուղերը կոտրատվում էին ձյան ծանրությունից: Ինչպես վկայում է Համբարձում Երամյանն իր հուշերում ժողովուրդը. « ...նախազգացումով թե նախապաշարումով՝ այլ շատ իրականք վերահաս դժբաղդութեան մը ազատարար նշանը կը համարէր բնութեան այդ անախորժ կատակը»:[17]

Անուշավան Տեր-Մկրտչյանը պատմում է, որ ինքը տասներկու տարեկան էր, երբ այս դեպքը պատահեց. «Կուռուպաշ գյուղի աղջիկները համբարձման տոնի կապակցությամբ բարձրացել էին Վարագա լեռը՝ ծաղիկներ հավաքելու և յոթն աղբյուրից ջուր բերելու: Մեր հայ տղաները թաքստոցից ծածուկ հետևում էին նրանց, որոնք երգում ու պարում էին: Սակայն մի քանի քրդեր նույնպես թաքնված հետևում էին աղջիկներին և սպասում հարմար պահի՝ առևանգելու նրանց: Լսվում է աղջիկների աղաղակները, ճիչերը, որոնք փորձում էին դուրս պրծնել քրդերի ձեռքից: Այդ տեսնելով՝ հայ տղաները հարձակվում են քրդերի վրա և ազատում աղջիկներն, բայց իրենք, քրդերի թվային գերակշռության պատճառով, գլխատվում են: Մինչ աղջիկները գյուղ կվազեին և օգնություն կբերեին, արդեն ուշ էր և ստիպված ծնողները իրենց չորս տղաների դիակները սայլերին դրած բերում են քաղաք՝ կուսակալին ցույց տալու և ոճրագործներին պատժելու համար: Չնայած կուսակալը խոստանում է նրանց գտնել և պատժել, բայց դրանք լոկ խոսքեր էին»:[18] Եվ այս ահավոր տեսարանից հետո Անուշավան Տեր-Մկրտչյանն իրեն նվիրում է ազատագրական գործին:

Այսպիսի իրավազուրկ և նսեմացուցիչ վիճակում էր ապրում Վասպուրականի հայությունը, որն ամեն օր, ամեն վայրկյան, կարող էր ենթարկվել հարձակման, ստորացման, ոչնչացման, իսկ կատարողները չէին ենթարկվում պատասխանատվության:

Եղիշե Գեղամյանն իր աշխատության մեջ նշում է, որ մոլլաները, իրենց հավատացյալներին, մզկիթներից հայտարարում էին՝ ավերել հայերի տները և կոտորել նրանց ամենուր՝ քաղաքներում, թե գյուղերում:[19]

Մահմեդականները, հայերի նկատմամբ ջարդեր իրականացնելով, նրանց միշտ հեգնանքով ասում էին. «գնացէք դեսպաններին գանգատ տեցէք»:[20]

---

[16] Ա.Կարապետյան, Արմենական կուսակցության կազմավորումը և գործունեությունը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, թեկնածուական ատենախոսություն, ՀԱԳ, Սպասարկման բաժնի ատենախոսությունների սեղմնագրերի ենթաբաժին, Ե., 1995, էջ 180:

[17] Հ.Երամյան, Հուշամատեան Վան-Վասպուրականի, հ. Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 350:

[18] ՀԱԱ, Ֆ.427, ց.1, գ. 23, թ.1, 2, 3:

[19] Գեղամյանց Եղիշե, Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարերում կամ Հայկական հարցի 6-րդ շրջանը, Բաքու, 1915-1917, էջ 469:

[20] Նույն տեղում:

Եվ իրոք, եվրոպական դեսպանները հանգիստ խղճով ականատես էին լինում արյունալի տեսարաններին և ոչինչ չէին ձեռնարկում՝ այն կանխելու համար:

1895թ. Կ.Պոլսի Իզմիրլյան պատրիարքը տեղեկագիր է ուղարկում Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին՝ նշելով, որ անգեն և անպաշտպան հայերը ենթարկվում էին զորքերի, ոստիկանների և պաշտոնյաների հալածանքներին, կողոպուտին, կոտորածին: Ամեն օր նոր գույժ ու այրունահեղություն էր, ամեն քայլափոխի բռնի մահմեդականացվում և հափշտակվում էին կանայք, աղջիկներ ու տղաներ: Ամեն տեղ դադարեցված էր եկեղեցական պաշտամունքը, եկեղեցին ու վանքերը կողոպտված, քանդված և այրված էին, իսկ քահանաներն ու վանականները սրախողխող էին արվում հենց մզկիթների դռան առջև: Խաչը, սրբության սրբոցը, փողոցում ոտքերի տակ անարգվում էր: Իսկ կույս աղջիկներին կնության էին առնում մահմեդականները»:[21]

Պատրիարքը նմանատիպ դիմումներ հղում է նաև Բ.Դռանը, եվրոպական և ռուսական դեսպաններին՝ խնդրելով միջոցներ ձեռք առնել այս իրավիճակը կանխելու համար: Բայց իզուր, քանի որ այն շարունակվեց և 1896 թ. ավելի մեծ ծավալի հասավ:

Անցավ 1896թ. ձմեռը՝ թշվառության, սովի, կիսամերկ պայմաններում, և մեծերն անիծեցին սև ձմեռն ասելով. «Էրթալդ էլնի և գալդ չելնի սեւ ձմեռ...»:[22]

Վերջապես եկավ սպասված գարունը: Բոլորը վատ կանխազգացումով սպասում էին: Եվ իրոք այն չուշացավ, որովետև 1896թ. մարտին Վանում տեղի ունեցավ երկրաշարժ, որն ավելի ծանրացրեց հայերի վիճակը:

Այդ օրերին իր բռնություններով ու անգթություններով Վանի Նորտուզ գավառի մեջ հայտնի էր քուրդ գրավչի ցեղի ավազակապետ Միվշիր Շաքիր փաշան: Վերջինս, որպես ընդհանուր բարենորոգումների բարձր կոմիսար, Կ.Պոլսից ժամանել էր «Մայիսյան ռեֆորմներն» իրագործելու նպատակով: Այդ հարցում նրան պետք է աջակցեր 4-րդ զորաբանակի հրամանատար Զեքի փաշան՝ տրամադրելով զինվորներ: Մուտք գործելով Կարին քաղաք՝ կոմիսար Շաքրիին չդիմավորեց առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանյանը՝ փորձելով արտահայտել բնակչության դժգոհությունը՝ կապված մայիսյան ծրագրերի կրճատման և ձգձգման հետ: Եվ դա առրթ հանդիսացավ հազարավոր հայերի ոչնչացմանը:[23]

Իր արարքն արդարացնելու նպատակով՝ Շաքիր փաշան նույնիսկ հայտարարում էր. «Տէրն է թոյլ տուել ջարդել հայերին»:[24]

1896թ. մարտին հնչակյանները կազմակերպեցին Վանից ոչ հեռու գտնվող Նորտուզ գյուղում Շաքրիի մահափորձը, որն անհաջող անցավ: Այդպիսի նպատակ ունեին նաև արմենականները և դաշնակցականները: Շաքրիի մահափորձի կազմակերպման մասին մեզ պատմում է դաշանակցական Սարգիս Մեհրապյանն ասելով, որ Շաքիրն ահ ու սարսափ էր տարածում հայ

---

[21] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 236 ժա, վավ. 205, թ. 1-4:
[22] Ասս, Կարմիր օրեր, Նյու-Յորք, 1907, էջ 10:
[23] Հ.Երամյան, նշվ. աշխ., էջ 348:
[24] Գեղամյանց Եղիշե, նշվ. աշխ., էջ 469:

գյուղացիների շրջանում, նույնիսկ ստիպում էր նրանց կրոնափոխ լինել: Իսկ բնակչությունը, վերագրելով դա ճակատագրին, համբերատար վերաբերմունք էր ցուցաբերում դրան: Կառավարական պաշտոնյաների հետ Շաքիրն ուներ գաղտնի կապ և նրանցից ստանում էր հրահանգներ ու գենք:[25]

Սակայն դաշնակցականների ցանկությունը նույնպես չիրագործվեց, որովհետև Վանից Պետոն տեղեկացրեց նրանց, որ գործերը շատ վատ են վիլայեթում: Նրանք էլ թողնելով ամեն ինչ՝ շտապեցին քաղաք:

Բայց դա պատճառ դարձավ, որ երբ 1896թ. հունիսին կառավարությունը պաշտոնապես հրահանգեց վիլայեթի հայ բնակչությանը կոտորել, Շաքիրն ամբողջ Նորտուզը և Հայոց Ձորը հրի ու սրի մատնեց:

Այս ամենը բարենպաստ պայմաններ էր ստեղծում Սաադեդին փաշայի համար, որ 1896 թ.Վանում իրականացներ սուլթանի վաղեմի երազանքը: Կոտորածից 40 օր առաջ Սաադեդինն այցելում է քուրդ ցեղապետերին, ստուգում նրանց պատրաստակամությունը հայերին ոչնչացնելու հարցում և հատուկ հրահանգներ տալիս: Միաժամանակ հանդիպում է բազմիցս դատապարտված ավազակապետ Շաքրիի հետ և խորհրդակցում իրենց անելիքների մասին: Մոտ երկու ամիս գավառներում շրջելուց հետո, Սաադեդինը մեծ ավարով վերադառնում է Վան՝ սպասելով մի փոքր առիթի, որպեսզի բռնկվեր մեծ հրդեհ: Եվ իհարկե այն չուշացավ:

Թուրքերը 400 զինվորով խուզարկություններ են կատարում հայերի բնակարաններում՝ հայդուկներ հայտնաբերելու նպատակով: Կառավարության զորքերը 1896թ.հունիսի 2-ին շրջապատեցին Մեծ-Քենթրչի թաղը և խուզարկության ենթարկեցին Վազգեն Դերոյանենց տունը: Իբր վտանգավոր թղթեր հայտնաբերելով՝ ծերբակալեցին դաշնակցական գործիչ Վազգենի քրոջը՝ օրիորդ Զարուհուն, որը մոր և Յանկոյանների քահանա Տեր Ավետիս Շաղոյանի ուղեկցությամբ տարվեց բանտ: Այնտեղ 3-3 շաբաթ պահելուց հետո քահանային ազատ արձակեցին, որը թողնելով հայրենիքը, հեռացավ Սալմաստ, որովհետև գտավ իր տունը քանդված ու թալանված: Իսկ օրիորդ Զարուհին ազատ արձակվեց միայն երկու ամիս հետո, սակայն 2 տարի անց, 1898 թ. հունվարի 5-ին եղբոր սպանությունից հետո աքսորվեց Կ.Պոլիս:

Ինչպես ժամանակակիցներն են վկայում, Աբդուլ Համիդ 2-րդի անձնական քարտուղար՝ Սիվրեյա փաշան, իմանալով հայոց ջարդի հրամանագրի մասին, փորձում էր գաղտնի տեղյակ պահել կայսերական պալատի հայ բժշկապետ Տիգրան փաշա Փեշտիմալճյանին: Վերջինս էլ պետք է տեղեկացներ եվրոպական տերություններին՝ սպասվելիք սպանդի մասին: Սակայն, նրանց մտադրությունը բացահայտվում է և որպես պատիժ Տիգրանը թունավորվում է պալատում, իսկ Սիվրեյան՝ սուլթանի ապտակից հանկարծամահ է լինում վախից:[26]

Ռուսական հյուպատոս Վլ. Մանսկին մի խումբ հայերի հետ, 1896թ. հունիսի 1-ին, մեկնեց Կովկաս, որին պետք է փոխարիներ դոկտոր Համո

---

[25] Խանասորա Վարդանի Հիշատակարանը, էջ 76:
[26] Հ. Երամյան, նշվ. աշխ., էջ 347:

Օհանջանյանի քեռայր, ախլցխացի Կարապետ Չիլինգարյանը՝ որպես հյուպատոսարանի թարգման:

Վասպուրականի Առաջնորդական փոխանորդ վարդապետ Ն. Արսեն Մարգարյանը դիմում է կաթողիկոս Մ.Խրիմյանին՝ ասելով, որ քաղաքների ու գյուղերի մեջ շարունակվում էր համաճարակը, որի հետևանքն էր խիստ ծմեռը և ժողովրդի մերկ ու անոթի վիճակը: Քաղաքացին չուներ տուն, անկողին ու թոնիր, իսկ գյուղացին նույնիսկ իր մերկությունը ծածկելու՝ ոչինչ: Փոքր գյուղերում համաճարակից մահանում էին 8-10 հոգի, իսկ մեծ գյուղերում՝ 15-20 հոգի: Նույնը կատարվում էր նաև քաղաքում:[27]

Պատմում են, որ գյուղերից մեկում մայր ու աղջիկ իրենց արտը վարելու համար նույնիսկ տղամարդ չունեին, ուստի իրենք էին լծվում սայլերին և արյունախառն ծնկներով ու արտասվալից աչքերով քաշ էին տալիս այն: Անհնարին է նկարագրել, թե ինչ աստիճանի թշվառության մեջ էին գտնվում գյուղացիները:[28] Նրանք ենթարկվելով կողոպուտի, հայածանքի ու թալանի, թողնում էին իրենց տուն-տեղ և ապաստան գտնում Վան քաղաքում: Գնալով նրանց վիճակը, էլ ավելի էր վատանում, չնայած ստանում էին համապատասխան օգնություն քաղաքից, բայց այնուամենայնիվ դա բավական չէր: Բարեբախտաբար Բողոքական միսիոներներն իրենց հիվանդանոցով, ծրի ու թարմ հացի փոքրով, մեծ գործարանով մխիթարում և պաշտպանում էին թշվառ հայերին: Այդ գործում մեծ դեր կատարեց հայոց առաջնորդարանի և ամերիկյան միսիոներների կողմից կազմված հանձնաժողովը՝ Դանիել վարդապետի և ամերիկացի բժշկուհի Միս Կրեյս Քեմպլի նախագահությամբ: Նրանք որոշեցին հիմնել մասնաճյուղեր մոտակա և հեռավոր գյուղերում իրենց սեփական միջոցներով, քանի որ դրսից եկած նպաստները բավարար չէին ապահովել գաղթականների կարիքները: Ամերիկուհի Մ.Քեմպլն իր մարդասիրական գործողությունների համար մեծ համբավ թողեց հայ ժողովրդի հիշողության մեջ:

Ամերիկացիներից եկած օգնությունը վերջացել էր, ուստի ժողովուրդը գտնվում էր ծանր կացության մեջ, այդ վիճակից ելնելով կրոնափոխ էին լինում պաշտոնական ձևով թե տղամարդ, թե կին: Եվ այդ կոտորածի հեղինակները քաջալերվում էին անգլիական հյուպատոսի կողմից, որոնց քննադատելով չի կարելի չգնահատել ռուսական հյուպատոսի հայ ազգի թարգման՝ Կարապետ Չիլինգարյանի, ազնիվ ու մարդասեր վարմունքը, որը ցույց տվեց ողջ կոտորածի ընթացքում և թե կոտորածից հետո: Նա ռուսական հյուպատոսարանում կոտորածի մասնակիցներին տեղեկագրելուց հետո արգելում էր հայերին զինաթափ անել և ապաստանելու ժամանակ խուզարկել:

Ուստի վարդապետ Մարգարյանը խնդրում էր կաթողիկոսին հատուկ գրով օրհնել թե ռուսական հյուպատոսին և թե Կարապետ Չիլինգարյանի կյանքը:[29]

Թուրքական իշխանությունները հայերին կոտորում էին կանոնավոր զորամասերի, համիդիեական գնդերի, ոստիկանության ու մահմեդական խուժանի

---

[27] ՀԱԱ, ֆ. 56, ց. 16, գ 184, թ. 42-44:
[28] Նույն տեղում:
[29] Նույն տեղում:

միջոցով: Նրանք ստեղծում էին զանազան առիթներ, տարածում պրովոկացիաներ և անցնում գործի: Մի դեպքում սպանում էին որևէ պաշտոնյայի կամ մահմեդականի և հայտարարում, որ հայերն են սպանել: Մի այլ դեպքում արատավորում էին մահմեդական կանանց և դրանում մեղադրում դարձյալ հայերին: Նրանք քարոզում էին, որ իբր հայերն ուզում են ոչնչացնել արիաթը, ինչպես նաև հավատացնում նրանց, թե հայերը պատրաստվում են բնաջնջել մահմեդականներին, կործանել Օսմանյան կայսրությունը և վերականգնել հայկական թագավորությունը: Իսկ մոլեռանդ բնակչությունը դարձել էր գործիք ջարդարարների ձեռքին՝ հավատալով այդ ամենին:

Թուրք դահիճներն իրենց զոհերին կախում էին ծառերից, շպրտում ժայռերից, կապում կենդանիների պոչից ու քարշ տալիս փողոցներում, ճեղքում էին հղի կանանց արգանդը և շպրտում երեխային մի կողմ, կտրում էին նրանց ականջները, լեզուն, քիթը, ձեռքերն ու ոտքերը, ջարդում էին ատամները, հանում աչքերը և ողջ- ողջ թաղում նրանց: Միաժամանակ թալանում էին իրենց զոհերին, բռնագրավում պարտեզները, այգիները, տները, հափշկակում անասունները, աշխատանքի գործիքները, տանում ուտելիքը, տան կահ կարասիները, նույնիսկ հագուստը:

Այս վիճակում էր գտնվում Վասպուրականի հայությունը, սուլթանական կառավարության իշխանության ներքո, Վանի ինքնապաշտպանության նախօրյակին՝ ամեն քայլափոխ ենթարկվելով հալածանքի ու ստորացման: Ուր ոտնահարվում էր նրա մարդկային արժանապատվությունն ու ինքնասիրությունը, իրենց սեփական տան մեջ լինելով՝ օտար ու ընչազուրկ: Կյանքի դժվարությունները ստիպում էին հայությանը, ոտքի կանգնել և պայքարել օսմանցու դեմ, իսկ վերջինս հարմար պահի էր սպասում՝ իրագործելու հայության ոչնչացման ծրագիրը:

1890-ական թվականներին, հայերի նկատմանբ օսմանցիների կողմից իրականացրած վերաբերմունքն ու ջարդը կարելի է համարել, 19-րդ դարի համաշխարհային պատմության մեջ, ամենամեծագույն ոճրագործություններից մեկը, որի արդյունքում զոհ դարձան հարյուր-հազարավոր հայեր: